ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/203

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.08.2020թ. թիվ 26/26-1/12447-2020 գրությամբ «Ֆրսթշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 17.08.2020թ. թիվ V02.4/[23376]-20 գրության հիման վրա 20.08.2020թ. թիվ 26/26-1/12447-2020 գրությամբ նախաձեռնել է «Ֆրսթշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ֆրսթշին» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ֆրսթշին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ֆրսթշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/203 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 11:30-ին և 04.09.2020թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.08.2020թ. թիվ V02.4/[23376]-20 գրությամբ հայտնել է, որ 2020 թվականի հուլիսի 24-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է ԳՀԱՊՁԲ-2020/7-8-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման միջոցով շինանյութի և/կամ այլ ապրանքների ձեքբերման գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆրսթշին» ՍՊԸ-ն:

Ս.թ. օգոստոսի 7-ին Ընթացակարգի շրջանակներում «Ֆրսթշին» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն, համաձայն որի՝ սխալ գնային առաջարկի ներկայացմամբ պայմանավորված՝ կազմակերպությունը հրաժարվում է Ընթացակարգի 11-րդ չափաբաժնով սահմանված ապրանքը մատակարարելուց, որն էլ դիտարկվում է որպես հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելու դեպք:

Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով Կարգի 45-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 8-րդ բաժնի 8.14-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը օգոստոսի 11-ի 4-րդ նիստի 2-րդ որոշմամբ մերժել է Ընկերության հայտը թիվ 11-րդ չափաբաժնի մասով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար Ընկերության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/203 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 11:30-ին և 04.09.2020թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/203 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/203 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը կազմակերպել է «ԳՀԱՊՁԲ-2020/7-8-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆրսթշին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.08.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ֆրսթշին» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն, համաձայն որի՝ սխալ գնային առաջարկի ներկայացմամբ պայմանավորված՝ Ընկերությունը չի մատակարարելու Ընթացակարգի 11-րդ չափաբաժնով սահմանված ապրանքը, որի հիման վրա վերջինիս հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.08.2020թ. թիվ 26/26-1/12447-2020 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 17.08.2020թ. թիվ V02.4/[23376]-20 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

<u>գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:</u>

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը կազմակերպել է «ԳՀԱՊՁԲ-2020/7-8-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆրսթշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.08.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ֆրսթշին» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն, համաձայն որի՝ սխալ գնային առաջարկի ներկայացմամբ պայմանավորված՝ Ընկերությունը չի մատակարարելու Ընթացակարգի 11-րդ չափաբաժնով սահմանված ապրանքը, որի հիման վրա վերջինիս հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ***<u>«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:</u>***

Ուսումնասիրելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Ֆրսթշին» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, քանի որ «ԳՀԱՊՁԲ-2020/7-8-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվելուց հետո Պատվիրատուին ուղղված գրությամբ

Ընթացակարգի թիվ 11-րդ չափաբաժնի մասով հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.08.2020թ. թիվ 26/26-1/12447-2020 գրությամբ «Ֆրսթշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ֆրսթշին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**